ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության փորձագետ Գոհար Սաթունցի

Ես՝ Գոհար Սաթունցս, ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2024թ.-ի հունվարի 9-ից (2024թ. հունվարի 9-ին կնքված Պայմանագրի համաձայն):

2024թ.-ի մարտի 11-ից մինչև 2024թ. մայիսի 8-ը ներառյալ, համաձայն աշխատանքային ծրագրի, իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- Բյուջետային վարկերից և երաշխիքներից բխող ֆիսկալ ռիսկերի բացահայտում, ազդեցության քանակական գնահատականների ստացում, վարկառուի վարկունակության և ֆինանսական վիճակի գնահատում՝ «ԴԻ ընդ ԷՅՋ», «Վ.Ա. ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» կազմակերպությունների մասով, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ շնորհանդեսի ներակայացում.
- «ՀՀ պետական բյուջեից վարկերի տրամադրման դեպքում իրականացվող վերլուծությունների արդյունքում տրամադրվող եզրակացության բովանդակության և կառուցվածքի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի մշակում և շրջանառում Նախարարության ներսում:
- Բնական աղետներից բխող ֆիսկալ ռիսկերի ուսումնասիրություն, գործող օրենսդրության, վերջինիս մեղմման ուղղված՝ ՀՀ-ում գործող մեխանիզմների, ինչպես նաև միջազգային փորձում առկա գնահատման և կառավարման մեթոդների ուղղությամբ ուսումանասիրության իրականացում.
- Հայաստանում աղետների ֆինանսական պաշտպանության ծրագրի ամփոփ հայեցակարգի մշակման աշխատանքներին մասնակցություն.
- ՀՀ 2025-2027 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում «Ֆիսկալ ռիսկերի վերլուծություն» բաժնում ընդգրկվող բյուջետային վարկերից բխող

ֆիսկալ ռիսկերի մանրամասն վերլուծության իրականացմանն ուղղված առաջարկների ներկայացում և իրագործում.

- «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում լրացումների և փոփոխությունների իրականացմանն ուղղված աշխատանքներին մասնակցություն.
- Այլ գերատեսչությունների կողմից ներկայացված նախագծերի, միջազգային կազմակերպություններից ստացված զեկույցների, քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի և ներկայացված առաջարկությունների ուսումնասիրություն և մասնագիտական դիրքորոշման ներկայացում:

Ֆիսկալ ռիսկերի կառավարման
վարչության փորձագետ՝ Գոհար Սաթունց